

Թ Ի Ի 21—22

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1911—12 ՇՐՋԱՆԻ

ԵՐԵՎԱՆԻ ԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ ԻԱ.—ԻԲ.

2 ԴԵԿՏ.—9 ԴԵԿՏ. 1911



Տպագրութիւն Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, Պապը-Ալի ճառտէսի, Թիւ. 49

1912

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1911—1912 ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

ՆԻՍՏ ԻԱ.

2 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԵՂԱՊԱՀ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՄԱՆՈՒԿ ԷՖԷՆՏԻ ԱԶԱՐԵԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ԸՆՏՐՈՒՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՅՈԾ ԹՈՒՐԲԻՈՅ :

(Նխառն տեղի ունեցաւ ի Մայր եկեղեցի
և ատենանք բացուեցաւ ժամը 3ին իսկը-
կայութեան 85 երեսփոխաններու, որոց
թիւը քուէարկութեան պահուն յանգե-
ցաւ 92ի) :

ՎԱԽԵՐԱՅՈՒՄՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այսօր օրակարգէն
զուրս ուրիշ խնդրով չենք կրնար զբա-
ղիլ, սակայն Գաղտնիքէն երեսփոխանա-
կան ընտրութեան մը տեղեկագիրը կայ
և որովհետեւ ըստ Սահմանադրութեան
Ժողովին ամբողջացման վերաբերեալ խըն-
դիրները, ուրիշ խնդիրներէ նախա-

պատուութիւն ունին, հետեւաբար կը
կարդանք այդ տեղեկագիրը և անմիջա-
պէս կ'անցնինք օրակարգին, որպէս զի
նորընտիր երեսփոխանն ալ կարենայ
մասնակցիլ քուէարկութեան :

(Ատենադպիր ԷՖ. կարդաց հետեւեալ
գիրը) :

Վահագնուք Ատենապետ ԷՖէնտի

Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ

Մայրաքաղաքիս Գաղտնիքի թաղէն
հրաժարեալ մէկ երեսփոխանի տեղ ըստ
հրահանգի նոր ընտրութիւն կատար-

Իրենց ընտրելիին ներքին կեանքը ու ար-
ժանաւորութիւնը:

ԱՏԵՆ. ԷՖ. — Եթէ Միլիքեան էֆ.ի
առաջարկին հակառակող չկայ, ուրեմն Ազգ.
Սահմանադրութեան ընտրութեան վերա-
բերեալ յօդուածները կարողաւոր միայն կը
բաւականանք:

(Ատենադպիր էֆ. կարգաց պատրիար-
քական ընտրութեան մասին Ազգ. Սահ-
մանադրութեան մէջ գտնուած յօդուած-
ները):

Ապա եկեղեցական եւ աշխարհական
քննիչներ նշանակուելով, գաղտնի քուէար-
կութեան ձեռնարկուեցաւ եւ քուէհամարի
արդիւնքը ծանուցուեցաւ ի դիւանէ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Քուէարկութեան ար-
դիւնքը կը յանձնեմ ձեր ուշադրութեան:

Տ. Յովհաննէս Արքեպս.	Արշարունի	52
Տ. Եղիշէ	» Դուրեան	36
Տ. Յովսէփ	» Սարաճեան	1
Սպիտակ		3

Հետեւաբար քուէից ստուար մեծա-
մասնութեամբ Թուրքիոյ Հայոց Պատրիարք
կը հռչակեմ ԱՄԵՆ. Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԽ-
ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՇԱՐՈՒՆԻ:

Նորընտիր Ս. Պատրիարքը ծանօթ է
շատերուդ իր եկեղեցւոյ եւ ազգի մատու-
ցած ծառայութեամբ: Ինք իբրեւ ուսուցիչ
յետոյ իբրեւ քարոզիչ, իբրեւ ժողովական
եւ ի վերջոյ իբրեւ Առաջնորդ Պրուսայի
կարեւոր աշխատութիւններ նուիրած է ու
ի ր անձնական բարեմասնութեամբ ինչպէս
նաեւ ուսումնական զարգացումով, գնահատ-
ուած է մեծապէս Ամենէն վերջ՝ իր տե-
ղապահական պաշտօնին մէջ ալ ցոյց
տուած նախանձախնդրութիւնը ճանչ-
ցուած ըլլալուն ապացոյցն է ներկայ ընտ-
րութիւնը, որուն համար ուրախ ենք:

Այս առիթով մեր վրայ պարտակա-
նութիւն կը ծանրանայ շնորհակալութիւն
յայտնել նաեւ Տեղապահ Ս.ին որ բաւա-
կան երկար ատեն բարոք պաշտօնավա-
րութիւն ունեցաւ, հակառակ իր տկար

վիճակին: Հետեւաբար իր ջանքերուն հա-
մար յանուն ժողովոյ շնորհակալութիւն
կը յայտնեմ:

(Ատենապետ էֆ.ի այս խօսքերը ըն-
դունուեցան ծափահարութեամբ):

ՏԵՂԱՊԱՀ Ս. — Ատենապետ էֆէնտիր
յայտարարութեանց համար իմ շնորհակա-
լութիւնս յայտնելով, կու գամ շնորհաւորել
Պատկ. Ժողովի իր կատարած արժանաւոր
ընտրութեան համար: Որքան կը ներեր
իմ անձնական տկար վիճակս ջանացի
ճշմարտապէս ծառայել ազգիս շահուց,
բայց թէ որքան յաջողեցայ, ժողովիդ
գնահատման կը մնայ: Կը մաղթեմ որ
նորընտիր Ս. Պատրիարքը, որուն վրայ
ազգը այնքան մեծ յոյսեր դրած է, պսակէ
ամենուս բաղձանքը եւ Աստուած կարո-
ղութիւն ու յաջողութիւն պարգեւէ ի-
րեն:

ԱՏԵՆ. ԷՖ. — Դիւանս ժողովին ընտ-
րութեան արդիւնքը պիտի հաղորդէ այս
երեկոյ իսկ նորընտիր Ս. Պատրիարքին,
հետեւաբար կը հրաւիրեմ որ յանուն ժո-
ղովոյ Տ. Մաղաքիա Եպսկ. Տէրունեան,
Տ. Գնէլ Վ. Գալէմբեարեան ու Տր. Տաղա-
ւարեան, Հ. Խոսրովեան եւ Յ. Պահրի
էֆ.ները միանան մեզի հետ: Նիստը փա-
կելէ առաջ կը հրաւիրեմ զձեզ որ ստո-
րագրէք կառավարութեան մատուցանելի
ընտրութեան տեղեկագիրը:

Հ. ԽՈՍՐՈՎԵԱՆ ԷՖ. — Չպիտի կըր-
նամ ստանձնել ի դիւանէ առաջարկեալ
այդ պաշտօնը:

ՅԱԿՈԲ ՊԱՀՐԻ ԷՖ. — Ես ալ նոյն-
պէս:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ուրեմն հրաժարեալնե-
րու տեղ կը նշանակենք Գ. Տէմիրճի-
պաշեան էֆէնտին:

(Երեսփոխանք մի առ մի ստորագրեցին
ընտրութեան տեղեկագիրը եւ ատենը
փակուեցաւ ժամը 4ին):

Ատենադպիր Ատենապետ
Օ. ԶԻՖԹԷՍՍՐԱՅ Մ. ԱԶՍՐԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1911—1912 ՆՍՏԱՇՐՁԱՆԻ

ՆԻՍՏ ԻԲ.

9 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1911

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԵՂԱՊԱՀ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՄԱՆՈՒԿ ԷՖԷՆՏԻ ԱԶՍՐԵԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Ուխտ Ամեն. Ս. Պատրիարք Հօր

(Նիստը տեղի ունեցաւ ի Մայր Եկե-
ղեցի ի ներկայութեան 50 երեսփոխա-
նաց):

Ֆէնտին որ կարգայ իր պաշտօնի վաւե-
րացման թէզքէրէն:

(Ատենադպիր էֆ. կարգաց հետեւեալ
գիւրը):

ԱՏԵՆ. ԷՖ. — Ազգ. ժողովի ընտրու-
թեամբ եւ կայսերական վաւերացմամբ
Տ. Յովհաննէս Ս. Արքեպսկ. Արշարունի
կոչուած ըլլալով Պատրիարքական Աթոռ,
Սրբազնութիւնը առաջնորդեցինք այսօր
Պատրիարքարան, հետեւաբար ժողովիս
կողմէ կարգեալ հրաւիրակներ պիտի ա-
ռաջնորդեն զինքը աստ, որպէս զի կա-
ռարէ իր Սահմանադրական Ուխտը, բայց
տնկէ առաջ կը հրաւիրեմ ատենադպիր է-

Էրմէնի Բաթրիգի ընթացիկութեամբ
Արշարունի Յովհաննէս էֆ. հաղրէթլէրինէ
Բիւթպէթլու էֆէնտիմ հաղրէթլէրի,
Միւնիսթր օլան Սթանպուլ վէ թէվապիթ
Էրմէնի Բաթրիգիլինէ, զաթը վաւախէրի-
նին վուզուի ինթիսապընա տաիր բաթ-
րիդ գայմագամըղընտան իթա վէ Պապը

Այլ ճանիպը սամբիսնէ թագաւմ վէ իսրա-
օլընան թագրի իլէ մազպաթաի ինթիխա-
պիյէ իւզէրինէ, մէզքիւր բաթրիգիլիէ
թայինլէրի խուսուսընա մէճիսը մախ-
սուսը վիւքէլա դարարը իլէ պիլիսթիզան
իրատէի սէնիյէի հազրէթը Բատիշահի չէ-
րէֆսուտուր պուրուլաղը վէ իգթիզա
խտէն պէրաթը ալինին տէրաթէսթը թաս-
տիր պուլընաղը պա թէզքէրէի սամիյէ
իգպար պուրուլմուշ օլմաղլա, պէյանը
հալ սիյազընտա թէզքէրէի սէնալէրի
թէրգիմ գըլընաղը:

Ատլիյէ վէ Մէզահիպ հազըրը
ՄէՍՏՈՒՀ

8 քեանուընը էվվէլ 327

(Ժողովը պահ մը դադար տալով, եկե-
ղեցական եւ աշխարհական պատգամաւո-
րութիւն մը Պատրիարքարան ելաւ նորըն-
տիր Ս. Պատրիարքը առաջնորդելու ի Մայր
Եկեղեցի: Տ. Յովհաննէս Ս. Պատրիարքի
ի Մայր Եկեղեցի մուտքը ծափերով ըն-
դունուեցաւ եւ առաջնորդուեցաւ սեղա-
նին առջեւ, որ ամբողջովին լուսազար-
դուած էր):

(Ատենապետ Մանուկ էֆ. Ազարեան
կարդաց հետեւեալ ճառը).

Ամենապատիւ Ս. Հայր,

Ազգային Ժողովս իր Դեկտ. 2ի նիս-
տին մէջ Ձեր Բ. Սրբազնութիւնը Թրքա-
հայոց պատրիարքական աթոռ կոչած ըլ-
լալով, Մայր Դիւանս, յանուն Ազգային
Ժողովոյ, կը փութայ Ձեր Բ. Սրբազնու-
թեան ընտրութիւնը շնորհաւորել, կաբո-
ղութիւն մաղթելով յաջողութեամբ կա-
տարելու այդ կարեւոր եւ բարձր պաշ-
տօնը՝ զոր Հայ ազգին համակրութիւնը
կը վստահի եւ կը յանձնէ Ձեր փորձառու
ձեռքերուն: Ազգային Ժողովս վստահ է
թէ Ձեր Բ. Սրբազնութիւնը իր երե-

սունամեայ պաշտօնավարութեան ասպա-
րէզին մէջ ցոյց տուած անձնութիւնը
պիտի շարունակէ ի շահ եւ յօգուտ Եկե-
ղեցոյ եւ Ազգին, որ այսօր՝ ամէն ժա-
մանակ աւելի պէտք ունի իր զաւակաց
աջակցութեան:

Բարեբախտ կը համարիմ զիս հրաւիրե-
լով զՁեր Սրբազնութիւն կատարել իր
Սահմանադրական Ուխտը:

(Ազարեան էֆ. Ազգ. Սահմանադրու-
թիւնը յանձնեց Ս. Պատրիարքին որ խո-
րանին առջեւ ծնկաչոք կարդաց Սահմա-
նադրութեան հետեւեալ 4րդ յօդուածը):

«Առաջի Աստուծոյ եւ ի ներկայութեան
Ազգ. Ժողովոյ, հրապարակաւ ուխտեմ
հաւատարիմ մնալ Սահմանադրական
Օսմանեան տէրութեան եւ Ազգիս, եւ
ճշմարտապէս հսկել Ազգ. Սահմանադրու-
թեան անթերի գործադրութեանը»:

ՏԵՂԱՊԱՀ Ս. — Սրբազան եղբայր,
Դուք հովուական գաւազանը ունիք ար-
դէն, կը փութամ ներկայացնել Ձեզ Պատ-
րիարքական իշխանութեան այս ցուպը՝ որ
անշուք ու պարզ բայց շատ խորհրդաւոր
է, ու մեծ նշանակութիւն ունի այս
ցուպը: Անիկա կրնայ փորձ ձեռքերու-
մէջ՝ Ահարոնի գաւազանին նման ծաղկիլ,
վարդեր սփռել՝ անուշ ու հոգեպարար
անիկա կրնայ Մովսէսի գաւազանը դառ-
նալ, որ աղիւրներ բացաւ ծարաւած չըր-
թունքներու. անիկա կրնայ ջահ մը ըլլալ
սիրտերն ու միտքերը լուսաւորելու: Ու-
րիշներ այս գաւազանին փշալից ըսած են.
կը ժխտեմ այդ կարծիքը: Փշալից է այս
ցուպը՝ երբ անփորձ ձեռքերու մէջ կը
գտնուի, բայց փառաւոր եւ արդիւնաւոր
կ'ըլլայ՝ երբ փորձ ձեռքերու կը յանձնուի:
Դուք արդէն կատարեալ փորձառութիւն
ունիք, ձեր վարած Տեղապահական ու-

Առաջնորդական պաշտօններով, կրօնական
եւ Ազգային Ժողովներու անդամակցու-
թեամբ: Ծանր իշխանութիւն մը կը
ստանձնէք, բազում տեսակ գործեր կան,
որ անվճար կորով կը պահանջեն, ապա-
ւինեցէք Աստուծոյ, ապա Պատկ. Երեսփ.
Ժողովին, Ազգ. Վարչութեան որ պիտի
դիւրացնեն ձեր ջանքերը: Վրդովումներու
մէջ էր Ազգին ներքին վիճակը, երբ պաշ-
տօնի կոչուեցայ, բարեբախտ կը համարիմ
ինքզինքս յանձնելով ձեզ Ազգին վիճակը
խաղաղ կերպով, կը շնորհաւորեմ Ձեզ եւ
Պատկ. Ժողովը եւ կատարեալ յաջողու-
թիւն կը մաղթեմ:

Ս. ՊԱՏՐԻԱՐԻՔ ՀԱՅՐ. — Շնորհակալ
եմ, Սրբազան եղբայր. ձեր թուած
յատկութիւնները իմ կարողութեան սահ-
մանէն վեր են, բայց կ'ապաւինիմ Աս-
տուծոյ, որուն՝ մարդկային միտքը չէ կըր-
ցած թափանցել: Ան էր որ զօրացուց,
արիացուց Առաքեալները՝ որ գործեն իրենց
անձանթ երկիրներ: Ապաւինելով այն
Աստուծոյ, որպէս Ռշտունեաց բուրաս-
տանին անուշահոտ ծաղիկը՝ առ Աստուած
աղերսող Գրիգոր Նարեկացի, ըսելով.
«Տէր աչք քո յիս եւ ես ի դժոխս»: Շնոր-
հակալ եմ Պատկ. Ժողովին վստահու-
թեան ու համակրութեան համար որ զիս
կոչեց այս պաշտօնին: Կը հաւատամ որ
այս ընտրութիւնը պղատոնական սէրը
չէր, այլ համոզումն ու գիտակցութեան
արդիւնք: Պատ. անդամներ Ազգ. Երեսփ.
Ժողովի, դուք որ առանց իմ գիտակցու-
թեանս կոչեցիք զիս այս պատրիարքա-
կան ծանր պաշտօնին, իմ շնորհակալու-
թիւններս կը յայտնեմ ձեզ առ այս եւ
անշուշտ եմ, որ դուք ձեր միաձայն օժան-
դակութիւնը չպիտի զլանաք ինծի եւ զօ-
րավիթ լինիք ինձ: Եթէ դուք ձեր օժան-
դակութիւնովն ու համերաշխ աշխատու-
թիւնովը զօրավիթ չլինիք ինձ, այն առեմ,

ես տգէտս, տկարս, հիւանդս ու անկա-
րողս, կ'ապիկարանամ եւ անկարող կ'ըլ-
լամ պայքարելու եւ աշխատելու: Ես
լիայոյս եմ որ այս Ժողովը պիտի օգնէ
ու հաժանուագ եւ համերաշխ աշխատակ-
ցութեամբ պիտի ընկերակցի ինծի: Տա-
ռապեալ ու խորտակեալ Ազգին ցաւերը
անհուն են, վէրքերը խոր, եւ ամէն օր
կարկուտի նման կը թափին խնդիրները:
Կը խոստանամ դառնալ առիւծ ամենի՝ օ-
տարին առջեւ ազգային շահերը պաշտպա-
նելու համար, եւ Ազգիս առջեւ՝ աղու
աղաւնի: Կ'աղաչեմ որ մեր վիճաբանու-
թիւնները չի մղեն մեզի՝ մինչեւ եսակա-
նութեան, վիճիք, կարծիքներ փոխանա-
կենք, յարգենք իրարու գաղափարը եւ
սկզբունքը՝ բայց չի յուզենք եղբայրատե-
կաց պայքարներ: Այս ընթացքով կը սոս-
կամ որ կորստեան վիճը կը գահավիժիք:
Անցեալը մէկ կողմ թողնով, զօրավիթ ըլ-
լանք իրարու. եւ օտարն ալ տեսնէ թէ
մէկ ենք, մէկ սիրտ: Շատ անգամ Հայ-
Հռոմէականաց, Յունաց եւ օտարներու
հետ չփման մէջ կը գտնուիմ. անոնք կ'այ-
պանեն մեզի, կը մեղադրեն մեզի՝ մեր այն
ցաւալի ունականութեան համար՝ թէ միշտ
անհամաձայնութիւն, պառակտում կը տիրէ
մեր մէջ: Երբ գործարանէ մը ներս կը
մտնէք, նախ կը տեսնէք բանուորներն որ
եռանդով ու ժիր կ'աշխատին, յետոյ մե-
քենաները, վերջէն անոնց մանրամասնու-
թիւններն եւ ապա չոգիի կաթսան որ
գործունէութեան մէջ կը դնէ բոլոր մե-
քենական կազմածները: Այս չոգի'ն, մեր
բոլոր վէճերուն այս առա'նքը, նպատակը
պէտք է ըլլայ միայն ազգին օգուտը:
Աստուած շնորհէ ձեզի հոգի իմաս-
տութեան, եւ զօրացնէ ամենքս, ինչ-
պէս երբեմն պարզ ու տգէտ ձըլ-
նորսներէն ազատութեան մենամարտիկ-
ներ յարոյց: Ես փիլիսոփայական հմաու-
թիւն չունիմ, բնագիտական, բնալուծա-
կան ուսում չունիմ, ունիմ միայն բա-

րենսդրութիւն, անկեղծութիւն եւ մէկուն
միւսին քմահաճոյքին չեմ հպատակիր :

Վերստին կոչում կ'ընեմ ձեր ազգա-
սիրութեան, որպէս զի միաբանութեամբ և
համերաշխութեամբ, դարման տանինք
ազգին բազմադիմի կարօտութիւններուն :

(Եկեղեցականք «Ուրախ լեր» շարա-
կանը երգելով Ս. Պատրիարքը իջաւ բե-
մէն ու առաջնորդուեցաւ նախագահական

աթոռը, ուրկէ «պահպանիչ» աղօթքը ար-
տասանեց եւ Ատենապետ Էֆ. ատենը
փակելէ յետոյ, ներկայ երեսփոխանքնորդն-
ար Ս. Պատրիարքին կարգաւ յայտնեցին
իրենց շնորհաւորութիւնները) :

Ատենադպիր

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

Ատենապետ

Մ. ԱԶԱՐԵԱՆ



